ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- դեկտեմբերի 2020 թվականի №---Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №214Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԶԱՆԳԵԶՈՒՐ-95» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԶԱՆԳԵԶՈՒՐ-95» արտադրական կոոպերատիվը (այսուհետ՝ Կոոպերատիվ) 2020 թվականի դեկտեմբերի 7-ի և 17-ի գրություններով խնդրել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2005 թվականի դեկտեմբերի 27-ի №214Ա որոշմամբ Կոոպերատիվին տրամադրված «Շինուհայր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0191 լիցենզիայի (այսուհետ՝ №0191 լիցենզիա) գործողության ժամկետը երկարաձգել 15 տարով,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով, մինչդեռ Կոոպերատիվը հայտը ներկայացրել է լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտից 14 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2019 թվականի դեկտեմբերի 9-ից Կոոպերատիվի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Կոոպերատիվը 2020 թվականի դեկտեմբերի 17-ի գրությամբ ըստ էության ընդունել է թույլ տրված Կարգի խախտումը, և հայտնել, որ կձեռնարկի բոլոր միջոցները հետագայում խախտումներ թույլ չտալու համար: Միաժամանակ նույն գրությամբ ներկայացրել է Կարգով պահանջվող Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից «Շինուհայր» փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման նպատակով տրամադրված 2020 թվականի դեկտեմբերի 17-ի №000219 ջրօգտագործման թույլտվությունը, համաձայն որի Կայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ԲՓ-139 և 2002 թվականի ապրիլի 15-ի «Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերության փորձաքննական եզրակացությունների համեմատ փոփոխվել են Կայանի հաշվարկային ելքի մեծությունը, Կայանի ջրառի և ջրահեռացման նիշերը,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Կոոպերատիվը խախտել է Կարգի 76-րդ կետի պահանջը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և Կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 27-ի «ԶԱՆԳԵԶՈՒՐ-95» արտադրական կոոպերատիվին «Շինուհայր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №214Ա որոշմամբ Կոոպերատիվին տրամադրված «Շինուհայր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0191 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել տասնհինգ տարով՝ որոշման՝
   1) 1-ին կետում «Շինուհայր համայնքի հին գյուղատեղում՝ Որոտան գետի ձախ ափին, Շրան գետի հետ հատման վայրում (բնական ջրահոսք)» բառերը փոխարինելով «Տաթև համայնքի վարչական տարածքում (գյուղ Շինուհայր)՝ Որոտան գետի Շրան վտակի վրա (բնական ջրահոսք)» բառերով, իսկ «15 տարի» բառերը փոխարինելով «մինչև 2035 թվականի դեկտեմբերի 27-ը» բառերով,
   2) 2-րդ կետով հաստատված հավելվածի՝

      ա) 3-րդ կետում «մինչև 2020 թվականի դեկտեմբերի 27-ը» բառերը փոխարինելով «մինչև 2035 թվականի դեկտեմբերի 27-ը» բառերով,

բ) 5-րդ կետում «Շրան գետի վրա» բառերը փոխարինելով «Շրան վտակի վրա» բառերով:

2. Կարգի 76-րդ կետի պահանջի խախտման համար Կոոպերատիվին նախազգուշացնել:
3. Պարտավորեցնել Կոոպերատիվին սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը (նախագծի փոփոխությունները)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում համապատասխան հիմնավորումներ:
4. Կոոպերատիվին՝ ընդունել ի գիտություն, որ՝
   1) «Շինուհայր» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված սահմանված տասնհինգ տարվա ժամկետը «ԶԱՆԳԵԶՈՒՐ-95» արտադրական կոոպերատիվի համար ավարտվում է 2020 թվականի դեկտեմբերի 27-ին,
   2) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի դեկտեմբերի 27-ից, բացառությամբ որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում Կոոպերատիվին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- դեկտեմբերի 2020թ.